

891.715

2-91

891.71-93

Ռ-94

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ № 25

ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ

Թարգմ. ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

1. ԿԱՐՄԻՐ ԾԱՂԻԿԸ

2. ԳԵՂԵՑԿՈՒՅԻ ՎԱՍԻԼԻՍԱՆ

○○○○○○○○

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Յպարան Ն. Ս. Ղազնեանի, Պոլից. 7

1916

891-710
2-91

ԴՈՒՍԱԿԱՆ

304

ՀԵՔԻԱԹՆԵՐ

Թարգմ. ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ



1. ԿԱՐՄԻ ԾԱՂԻԿ
2. ԳԵՂԵՅԿՈՒՅԻ ՎԱՍԻԼԻՍԱՆ

○○○○○○○○

Թ Ի Ֆ Լ Ի Զ
Տպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7
1916

ԿԱՐՄԻ ԾԱՂԻԿԸ

Լինում է չի լինում, մի հարուստ վաճառական: Ունենում է երեք աղջիկ, մինը միևսից գեղեցիկ, բայց ամենից գեղեցիկը լինում է փոքրը: Ինքն էլ ոչ կնիկ է ունենում, ոչ ուրիշ մօտիկ մարդ. ոչ կեանքն ու կայանքը, ոչ արծաթն ու ոսկին աչքին չեն գալիս, իր ամբողջ սէրը տալիս է աղջիկներին: Երեքին էլ սիրում է, բայց ամենից շատ սիրում է փոքրին: Մի անգամ էս վաճառականը վեր է կենում թէ գնայ հեռու աշխարհքներ առուտուրի: Երեք աղջկանն էլ կանչում է, ասում է. «Ի՞նչ էք ուզում, որ ձեզ համար բերեմ»: Մեծ աղջիկն ասում է՝ «Ես մի անգին քարերով զարդարած ոսկե ապարօշ եմ ուզում»: Միջնեկն ասում է՝ «Ինձ համար մի մաքուր ու անբիծ բիւրեղից շինած հայելի բեր»: Փոքրն էլ թէ՛ «Ինձ համար էն կարմիր ծաղիկը բեր, որից գեղեցիկը էլ աշխարհքումը ոչ կայ, ոչ կը ճարւի»: Փոքր աղջկայ խօսքի վրայ վաճառականը մտքի տունն է ընկնում. ասում է՝ «Դու քոյրերիցդ աւելի դժար բան ուզեցիր, աղջիկ ջան: Քո ուզած կարմիր ծաղիկը գտնելը հեշտ բան չի, և ես ի՞նչ իմանամ՝ նրանից գեղեցիկը աշխարհքումը էլ կայ թէ չը կայ»:

Վեր է կենում գնում աշխարհքից աշխարհք, երկրից երկիր անց է կենում, առուտուր է անում, շատ գանձ ու հարստութիւն է վաստակում, բեռներ կապում ճամբու դնում զէպի տուն: Մեծ աղջկայ ուզած անգին քարերով զարդարած ապարօշն էլ է գտնում, որ գիշերը ցերեկի նման լուս էր տալիս. միջնեկ աղջկայ ուզած բիւրեղեայ հայելին էլ է գտնում, որի մէջ երևում էին աշխարհքի բոլոր գեղեցկութիւնները, մէ-

ջը նայողի գեղեցկութիւնը երբէք չէր թառամում ու օրէցօր աւելանում էր:

Բայց փոքր աղջկայ ուզած Կարմիր ծաղիկը, որից գեղեցիկը աշխարհքումը չը լինէր՝ ոչ մի տեղ չի գտնում: Գեղեցիկ ծաղիկներ պատահում էին, բայց ո՞վ կարող էր ասել, թէ նրանցից գեղեցիկները էլ չը կային աշխարհքում:

Վերադարձին, մի խոր անտառով անց կենալու ժամանակ, աւազակները յարձակում են էս վաճառականի վրայ, ունեցած-չունեցած գանձն ու հարստութիւնը կողոպտում են, ինքը փախչում է, ընկնում անտառի խորքերն, ազատւում: Գրնում է, գնում, ոչ ձէն, ոչ ծպուտ. շունչ կենդանի չը կայ: Գիշերը վրայ է հասնում, էնքան մութը գիշեր, որ մատը մարդի աչքը կոխէի՝ չէր տեսնիլ, բայց մեր վաճառականի ոտի տակը էնպէս լուս է լինում, ոնց որ օրը ցերեկով: Քանի գնում է, էնքան լուսանում է, քանի գնում է, էնքան լուսանում է, վերջը դուրս է գալիս մի բացատ, բացատում տեսնում է արծաթից, ոսկուց ու անգին քարերից շինած մի պալատ, որ կրքակի նման էրում է, արեւի նման լուս տալիս, իսկ ներսից լսում են երաժշտութեան ներդաշնակ դրախտական ձայները:

Բախն է մտնում, բակից անցնում է մտնում պալատ: Տեսնում է արծաթով, ոսկով, անգին քարերով լիքը. սրբած, վեր քաղած, ամեն բան սարքին-կարգին, բայց մէջը մարդ չը կայ: Մի սենեակ է մտնում՝ մարդ չը կայ, միւսն է մըտնում՝ մարդ չը կայ, երրորդն է մտնում՝ մարդ չը կայ: Ոչ տէր կայ մէջը, ոչ տիրական, ոչ ծառայ կայ, ոչ ծառայող, միայն երաժշտութիւնն է, որ իրեն իրեն հնչում է ու հնչում: Լաւ տեղ է, բայց աւելի լաւ՝ կը լինէր, եթէ մի ուտելու բան էլ լինէր, անց է կենում վաճառականի մտքովը: Մտքովն անց կենալն է լինում. մին էլ էն է տեսնում, առաջը մի սեղան բացւեց, մի սեղան, որ Աստուծո ամեն բարին մէջը լիքն է: Նստում է, ուտում, խմում, կշտանում տեղիցը վեր կենում: Վեր է կենում թէ չէ, սեղանն էլ ետ նորից անհետանում է: Վաճառականը զարմանում է: Մի սենեակից միւսն է անց կե-

նում, նայում ու հիանում: Երբ որ բոլոր սենեակները ման է գալիս, յոգնում է, քունը տանում է, ուզում է քնի, առաջը մի էն տեսակ սիպտակ, մաքուր, փափուկ անողին է փրկում, որ մէջը մտնելն ու աչքը կպցնելը մէկ է լինում:

Առաւօտն աչքը բաց է անում, տեսնում է շորերը դարսած, պատրաստւած, բիւրեղեայ ամաններով վճիտ ջրերը երեսը լանալու համար առաջը դրած: Երեսը լանում է, լուսամուտից ներքն նայում՝ պալատի շորս կողմը հրաշալի այգիներ, այգիների մէջ ոսկեգոյն պտուղներ են հասնում, չը տեսնւած գեղեցիկ ծաղիկներ են ծաղկում, ու սիրտն ուզում է զբօսնի էն այգիներում: Մարմարէ ու զմրուխտէ սանդուխտներից ներքն է իջնում, մտնում է կանաչ այգիները: Ճեմում է ու հիանում: Հասուն պտուղները կախկախ են ծառերից, երփներանգ ծաղիկները փարթամ ծաղկում ու անմահական հոտ են բուրում, զարմանահրաշ հաւքերը շորս կողմը թրթռում ու դրախտական երգեր են երգում, շաղրլաւները զւարթ կարկաչելով վերն են ցայտում իրենց վճիտ ջրերը ու խոխոշում են բիւրեղանման աղբիւրները: Ման է գալիս մեր վաճառականը, գմայլում: Մին էլ յանկարծ տեսնում է մի թմբի վրայ մի Կարմիր ծաղիկ է ծաղկում, մի ծաղիկ, որ մարդ իր օրումը ոչ տեսել է, ոչ լսել: Մօտենում է, ձեռն ու ոտը դող են ընկնում, ասում է՝ «ահա հէնց էս է լինելու էն Կարմիր ծաղիկը, որից գեղեցիկը էլ աշխարհքումը ոչ կայ, ոչ կը ճարւի: Հէնց էս ծաղիկն է լինելու, որ ուզում էր իմ փոքր աղջիկը»:

Մօտենում է ծաղիկը պոկում: Պոկում է թէ չէ, փայլալը փայլատակում է, կայծակը որոտում է, երկիրը դողում, ու, ոնց որ թէ գետնի տակիցը դուրս գայ, մինը դուրս է գալիս. վաճառականի առաջին կանգնում. — գազան ասես — գազան չի, մարդ ասես — մարդ չի. մի բրդբրդոտ, զարհուրելի հրէշ, ու մռնչում է կատաղի:

— Էս լինչ արիւր դու: Ի՞նչպէս համարձակեցիր՝ պոկեցիր իմ այգուց իմ սիրած, իմ նւիրական ծաղիկը: Ես քեզ հրա-

ւիրած թանգ հիւրի նման իմ պալատն ընդունեցի, ուտեցրի, խմեցրի, քնեցրի, իսկ դու իմ լաւութեան փոխարէնը էգպէս ես ետ վճարում: Դէ հիմի իմացած եղիր՝ որ վերջդ հասել է: Քո մահը ցոյց պէտք է տամ քեզ, որ քո աչքով տեսնես»:

Վաճառականը վախից ատամ-ատամ դողացնում է: Մտիկ է անում, որ չորս կողմից, ամեն մի ծառ ու թփի արանքից, ջրի միջից, գետնի տակից՝ դուրս են եկել ու սողում են դէպի իրեն անթիւ ու անհամար այլանդակ ու գարշելի արարածներ: Երեսի վրայ ընկնում է բրդբրդոտ հրէշի առջև՝ խղճալի աղաղակում:

— Ով անտառի տէր, ով անյայտ հօր, ինձ մի սպանիր իմ անգիտուն մեղքի համար. ողորմութիւն արա, հրաման տուր խօսք ասեմ»: Ու պատմում է իր աղջկների ու իր խոստումի մասին: Ապա սկսում է աղերսել, որ հրէշն իրեն շնորհի կարմիր ծաղիկը իր փոքրիկ աղջկանը տանելու համար: Փոխարէնը խոստանում է ոսկի տայ, որքան կուզի: Քահ-քահ խնդում է զարհուրելի հրէշը, անտառի տէրը: Ասում է.

— Ի՞նչ եմ անում քո գանձն ու ոսկին, իմ ունեցածն էլ չգիտեմ որտեղ պահեմ: Քեզ անվնաս կը թողնեմ, որ քո տունը գնաս, անհաշիւ էլ գանձ կը տամ, կարմիր ծաղիկն էլ կը տամ, միայն թէ խօսք տաս, որ քո աղջիկներից մէկն ու մէկին ինձ մօտ կուղարկես: Ոչ մի վատ բան չեմ անիլ նրան, չեմ վշտացնիլ, չեմ վիրաւորիլ. իմ պալատում կապրի էնպէս, ինչպէս դու ապրեցիր: Ձանձրացել եմ մենակութիւնից, ուզում եմ մի ընկեր ունենամ»:

Վաճառականը, էս որ լսում է, շատ է տխրում. նայում է անտառի հրէշի վրայ, յիշում է իր աղջիկներին ու լաց է լինում: Ասում է.

— Ես մեց անեմ, եթէ իմ աղջիկները չուզենան քեզ մօտ գան: Հօ չեմ կարող ես նրանց ձեռն ու ոտը կապեմ ու զօռով զրկեմ: Եւ վերջապէս, ի՞նչ իմանան, ի՞նչ ճամփով կարող են հասնել քեզ մօտ: Ես երկու տարումը հազիւ եմ կա-

րողացել էստեղ հասնեմ. էն էլ ինչ տեղերով, ինչ ճամփէքով— ես էլ չեմ իմանում...»:

— Ես ստրուկ չեմ ուզում, պատասխանում է անտառի հրէշը: Քո աղջիկները համով-կամով թէ կը գան, թող գան, թէ չեն գալ, էն ժամանակ դու պիտի ետ դաս, որ քեզ պատժեմ չարաչար մահով: Իսկ թէ ինչպէս պէտք է գալ ինձ մօտ, դրա համար դու հոգս մի անիլ. ահա իմ մատի մատանին. առ, ով էս մատանին դնի իր աջ ձկութը, հէնց նոյն վայրկեանին դուրս կը գայ էնտեղ, որտեղ ուզենայ: Դէ գնա. քեզ երեք օր երեք գիշեր ժամանակ...»:

Ի՞նչ պէտք է անէր խեղճ վաճառականը: Մտածում է, մտածում, խօսք է տալիս ու մատանին առնում: Մատանին աջ ձկութն է դնում թէ չէ՝ դուրս է գալիս իրեն տան առաջը: Տեսնում է իր գանձերով ու թանկագին ապրանքներով բեռնած քարւաններն էլ դարպաւից նոր են ներս մտնում, ու մընին երեք՝ առաջանից աւել են բերում:

Աղջիկները դէմն են գալիս, վզովն են ընկնում, համբուրում են, գուրում, գուրգուրում են, բայց տեսնում են, որ իրենց հէրը շատ է տխուր. սիրտը չի բացւում, ունքամէջը ետ չի գնում: Սկսում են ամենքը մի կողմից հարցնել, թէ ինչո՞ւ է տխուր, կարողութիւնն է կորցրել, թէ՞ առողջութիւնը. ի՞նչ է պատահել:

— Առողջութիւնս չեմ կորցրել, պատասխանում է վաճառականը, ոչ էլ կարողութիւնս, դեռ մէկին երեք-չորս էլ աշխատել եմ: Իմ ցաւը ուրիշ ցաւ է, էսօր համբերեցէք, էգուց կը պատմեմ՝ կիմանաք: Պատւիրում է, սնդուկները ներս են բերում, հանում է մեծ աղջկայ ուզած անգին քարերով շինած ոսկի ապարօշը իրեն է տալիս: Միջնեկ աղջկայ ուզած հայելին էլ իրեն է տալիս: Փոքր աղջկայ կարմիր ծաղիկն էլ ոսկի ծաղկամանով՝ իրեն է տալիս:

Առաւօտը որ լուսանում է, մեծ աղջկանը կանչում է, ինչ որ իրեն հետ պատահել էր, պատմում է ու հարցնում՝ թէ կը յօժարի՞ գնայ ապրի անտառի տիրոջ՝ անճոռնի հրէշի մօտ

ու իրեն ազատի չարաչար մահից: Մեծ աղջիկը հրաժարւում է. ասում է. «Ես ինչո՞ւ եմ գնում, ում համար կարմիր ծաղիկը բերել ես, թող նա գնայ: Միջնեկ աղջկանն է կանչում, նա էլ է հրաժարւում: Փոքր աղջկանն է կանչում, ամեն բան պատմում: Փոքր աղջիկը հօր առաջը ծունկի է գալիս, ասում է. «Ես կը գնամ, հայրիկ, օրհնիր ու ճանապարհ դիր ինձ, ես կը գնամ կապրեմ անտառի տիրոջ՝ անճոռնի հրէշի հետ: Ոնց որ դու ինձ համար կարմիր ծաղիկը բերել ես ու ընկել փորձանքի մէջ, էնպէս էլ ես պէտք է ազատեմ քեզ էդ փորձանքից»:

Էն օրն էլ է անց կենում, միւս օրն էլ, վրայ երեք գիշերը վաճառականը պէտք է բաժանւէր աղջկանից: Հրէշի մատանին հանում է, բերում աղջկայ ճկուժը գնում թէ չէ, աղջիկն իսկոյն իր ունեցած-չունեցածն էլ հետը՝ անհետանում է:

Անհետանում է, մին էլ աչքը անտառի հրէշի շքեղ ապարանքումն է բաց անում, մի ոսկի մահճակալի վրայ, փափուկ մետաքսէ անկողնում: Գլուխը վեր է բաշում՝ տեսնում է կարմիր ծաղիկն էլ ոսկէ ծաղկամանի մէջ՝ դրած կողքին: Սիրտն ուզում է պալատը ման գայ, վեր է կենում գնում բոլոր սենեակները ման գալիս, բոլոր հրաշալիքները տեսնում, հիանում: Յետոյ իր սիրած կարմիր ծաղիկն առնում է՝ իջնում այգին: Այգին է մտնում թէ չէ, թռչունները երգում են իրենց եղեմական երգերը, ծառերը, ծաղիկներն ու թրփերը քնքշօրէն ձօճելով իրենց գլուխները խոնարհում են առաջին: Ու գնում է աղջիկը, զբօսնելիս գտնում է հէնց էն թումբը, որի վրից իր հէրը կարմիր ծաղիկը պոկել էր: Ուզում է նորից տնկի իր տեղը, բայց ինքը ծաղիկը ձեռքիցը թռչում է, կաշում իր բնին ու բացւում առաջւանից աւելի գեղեցիկ: Էս հրաշքի վրայ աղջիկը շատ է զարմանում, շատ է ուրախանում ու ետ է գալիս պալատը:

Գնում է, պալատի սենեակներում ման է գալիս, տեսնում է մէկում էլ մի սեղան է բաց արած, Աստուծո՞ւ ամեն

բարին վրէն: Մտքումն ասում է. «Անտառի հրէշը երևի ինձ վրայ չարացած չի, բարի աչքով մտիկ կանի, տէր ու տիրական կը լինի»: Էս մտածելու ժամանակ մին էլ էն է տեսնում մարմարէ ձերմակ պատի վրայ հրեղէն տառերով երեւացին էս խօսքերը. — Ես տէր չեմ քեզ համար, ես քո հրնազանդ ծառան եմ: Դու իմ տիրուհին ես, ինչ որ քո սիրտն ուղի, կը կատարեմ ամենայն սիրով»: Էս խօսքերը կարդում է թէ չէ՝ սեղանը լցւում է ամեն տեսակի քաղցրաւենիքներով, շաքարեղէններով ու անուշ խմիչքներով, ու բոլորը մաքուր ոսկեկէն ամանների մէջ: Ուրախ-ուրախ նստում է՝ ուտում, խմում զովանում, երաժշտութիւնով զւարճանում, ճաշելուց յետոյ էլ ետ գնում կանանչ այգիներում ճեմելու, հազար ու մի հրաշալիքների վրայ զմայլելու:

Էսպէս ապրում է աղջիկն անտառի տիրոջ պալատում: Ամեն օր կարած պատրաստ նորանոր էն տեսակ ճոխ ու զարդարուն զգեստներ է ստանում, որ ոչ լեզուով պատմել կը լինի, ոչ գրչով նկարագրել: Կամաց-կամաց սկսում է ձեռագործով պարապել, ոսկով, արծաթով ու մարգարտով ասեղնագործել: Իր ձեռագործներից զրկում է հօրը նւէր, իսկ ամենալաւը պատրաստում է անտառի տիրոջ համար՝ բայց չի իմանում ինչպէս նւիրի:

Էսպէս բաւական ժամանակ անց է կենում: Զահէլ աղջիկը ընտելանում է իր կեանքին, ոչ մի բանի վրայ զարմանում է, ոչ էլ մի բանից վախենում: Ծառայում են անտեսանելի ծառաներ, տալիս են, առնում են, իր բոլոր հրամանները կատարում են: Ու աղջիկը սկսում է օրէցօր աւելի ու աւելի սիրել իր տիրոջը: Իմանում է, որ նա էլ իրեն է սիրում և նա աւելի է սիրում իրեն, քան թէ ինքը նրան, ու շատ է ուզում մի անգամ ձէնը լսի, հետը զրոյց անի: Հետդհետէ սկսում է խնդրել, աղաչել, բայց անտառի տէրը չի ասում, վախենում է իր ձէնով նրան վախեցնի:

Մի անգամ էլ աղջիկը այգին է իջնում, գնում իր սիրած տեղը նստում՝ չորս կողմից տերեւներով ու ծաղիկներով

շրջապատւած: Նստում է ու դիմում աներևոյթ անտառի տիրոջը:

— Իմ անուշ, իմ բարի տէր, ասում է, մի վախենար թէ ինձ քո ձէնով կը վախեցնես: Էսքան բարութիւնից յետոյ ես գազանի մոնշիւնց էլ չեմ վախենալ. մի վախենար, խօսի՛ր ինձ հետ...»: Մին էլ յանկարծ լսում է, որ մինը ասես թէ հառաչեց թփերի ետեից, ապա թէ լսում է սարսափելի, վայրենի, խուլ ու խալոտ ձէնը, և էն իբրեւ թէ շշրնջում է: Աղջիկը մին ցնցւում է, մին էլ իրեն տիրում է, ցոյց չի տալիս թէ վախեց, ու կամաց-կամաց հաճոյքով լսում է նրա անուշ, փաղաքուշ խօսքերը, խոր ու խելացի մտքերը, ու սիրտը բացւում է, լցւում է անհուն ուրախութիւնով:

Էն օրւանից կանաչ այգում լինէին, մութն անտառում թէ պալատում, ամեն օր զրոյց էին անում իրար հետ: Աղջիկը հէնց հարցնում է.

— Էստե՞ղ ես արդեօք, իմ սիրելի տէր»:

— Էս տեղ եմ, իմ աննման տիրուհի, ես, քո հլու ծառան, քո հաւատարիմ ընկերը, — պատասխանում է անտառի տէրը, անճոռնի հրէշը:

Ու աղջիկը էլ չի վախենում նրա վայրենի, սարսափելի ձէնից, ու զրոյց են անում, զրոյց են անում անվերջ, անվերջ...

Շատ ժամանակ է անց կենում էսպէս թէ քիչ՝ աղջիկը սրտով ցանկանում է մի անգամ էլ իր աչքով տեսնի անտառի տիրոջը, անճոռնի հրէշին, ու սկսում է խնդրել, աղաչել, որ իրեն երևայ:

— Ձէ, իմ աննման գեղեցկուհի, էդ մի խնդրի՛ր ինձանից, որ ես քեզ երևամ ու իմ գգելի դէմքը, իմ այլանդակ մարմինը քեզ ցոյց տամ: Ինձ աչքով տեսնես թէ չէ՝ կատես, աչքից կը գցես, քեզանից հեռու կը քշես, իսկ ես, որ քեզանից հեռանամ, կարօտից կը մեռնեմ:

Էսպէս է պատասխանում անտառի տէրը, անճոռնի հրէշը, ու չի կամենում երևայ: Բայց աղջիկը յամառում է իր

ասածի վրայ, երգւում է թէ աշխարհքում ոչ մի հրէշից իսկի էլ չի վախենում, և որ նրան, իր բարի տիրոջը՝ չի ատիլ երբէք:

— Դէ լաւ, ասում է հրէշը, որ էդպէս է, կը կատարեմ քո ցանկութիւնը, թէն հաստատ դիտեմ, որ դրանով պէտք է իմ երջանկութիւնը խորտակեմ ու անմուրազ մեռնեմ: Իրիկւայ աղջամղջին, երբ արեւը կը մտնի անտառի ետեւը, արի այգին ու ինձ կանչիր, ասա. «Յայտնւիր ինձ, իմ հաւատարիմ ընկեր»:

Եւ եթէ կը տեսնես, որ էլ չես կարող ինձ մօտ մնալ, ես էլ չեմ ուղիւ քեզ գերութեան մէջ պահեմ. քո նշնջարանում բարձիգ տակին է իմ ոսկի մատանին: Դիր աջ ձկութդ, իսկոյն դուրս կը դաս քո հօր տանը, ու երբէք էլ ոչ մի բան չես լսիլ ինձանից:

Իրիկունը աղջամուղջին, արեւը անտառի ետեւը ծածկւում է թէ չէ, աղջիկը կանչում է. «Յայտնւիր ինձ, իմ հաւատարիմ ընկեր»:

Ու հեռում երևում է անտառի տէրը, անճոռնի հրէշը: Ճամփի կիսով անց է կենում ու կորչում խիտ թփուտի մէջ: Աղջիկը տեսնում է թէ չէ, անից ձշում է ու ճամփի մէջտեղը ուշաթափ վեր ընկնում: Սոսկալի տեսք ունէր անտառի անճոռնին. ձեռները ծուռ-ծուռ, մատները ճանկերով, ոտները ձիու սմբակներ, առջևի ու ետևի կողմից ուղտի սապատներ, ոտից գլուխ բրդոտ, բերանի երկու կողմից դուրս տնկւած երկու վարազի ժանիք, քիթը կեռ, ուրուրի կտուցի նման, իսկ աչքերը ոնց որ բուրի աչքեր...

Աղջիկը մին էլ էն տեղ է ուշքի գալիս, որ մինը կողքին լաց է լինում ու մղկտում: «Ինձ սպանեցիր, իմ աննման տիրուհի, էլ քո սիրուն երեսը ես չեմ տեսնելու... Դու էլ չես լսում ինձ... Աւելի լաւ է հէնց էսպէս անմուրազ մեռնեմ ու պրծնեմ»:

Աղջիկը որ լսում է, խղճահարւում է, ամաչում է, որ իր բարի, իր սիրելի ընկերից էսքան վախեցաւ: Ասում է՝ «Մի վախենար, իմ բարի, իմ անուշ տէր, էլ քեզանից ես չեմ վախենալ, էլ քեզանից ես չեմ հեռանալ, էլ քո լաւութիւնը ես չեմ մոռանալ, այժմ նորից երևայ...»:

Նորից է երևում անտառի տէրը, անճոռնի հրէշը, միայն թէ՛ ինչքան աղջիկը կանչում է, չի համարձակւում մօտենալ: Ու զբօսնում են մինչև կէս գիշեր, առաջւայ նման անուշ, իմաստալի գրոյցներ են անում ու աղջիկն արդէն ոչ մի ահ ու երկիւղ չի զգում:

Միւս օրը նորից է տեսնում, բայց էս անգամ արևի լուսով, ու թէև մի քիչ վախենում է, բայց ցոյց չի տալիս, մի քանի օրից յետոյ էդ վախն էլ է անցնում բոլորովին:

Ու սկսում են առաջւանից աւելի քաղցր գրոյցներ, աւելի ու աւելի են մօտենում իրար, սկսում են միասին նստել սեղանի, միասին զբօսել այգիներում ու թափառել մթին անտառներում:

Էսպէս էլ բաւական ժամանակ է անց կենում: Մի անգամ էլ աղջիկը երազում տեսնում է՝ որ իր հէրը հիւանդ պառկած է, լաց է լինում, դարդ անում: Անտառի տէրը, անճոռնի հրէշը աղջկայ արտասուքը որ տեսնում է՝ հարցնում է, թէ ինչո՞ւ համար է արտասուք թափում ու դարդ անում: Աղջիկը իր երազը պատմում է ու խնդրում, որ իրաւունք տայ՝ գնայ իր հօրն ու իր քոյրերին տեսնի:

— Էլ իրաւունք տալը ո՞րն է, ասում է հրէշը, իմ ոսկի մատանին քեզ մօտ է. դիր աջ ձկութիւն ու նոյն վայրկեանին դուրս կը գաս քո հօրանց տանը: Բայց իմացած եղիր, եթէ երեք օրէն վրայ ետ չեկար՝ էլ ինձ չես տեսնիլ: Կը մեռնեմ, որովհետև քեզ ինձանից աւելի եմ սիրում, ու առանց քեզ ապրել չեմ կարող:

Աղջիկը խօսք է տալիս, որ երեք օրից մի ժամ էլ առաջ կը վերադառնայ, հրաժեշտ է տալիս, մատանին աջ ձկութիւն դնում ու մին էլ աչքը հօրանց տանն է բաց անում: Հօրանց տանը պատմում է, թէ ինչ կեանք ու ապրուստ ունի անտառի տիրոջ, անճոռնի հրէշի թագաւորութեան մէջ: Քոյրերը որ իմանում են թէ իրենց փոքր քոյրը ինչ անհուն գանձ ու կարողութիւն ունի, և թէ ինչ թագուհու իրաւունք է բանեցընում իր տիրոջ վրայ՝ նախանձում են: Առաջին օրն էսպէս

է անց կենում, ոնց որ մի ժամ, երկրորդ օրը՝ ոնց որ մի վայրկեան, երրորդ օրն էլ մօտենում է իր վերջին:

Էս քոյրերը մի չար բան են մտածում: Մտածում են՝ էնպէս անեն, որ իրենց փոքր քոյրը խոստացած ժամից ուշանայ, անտառի տէրը բարկանայ վրէն: Բերում են քնի դեղ են տալիս. սրա վրայ ծանր մրափ է գալիս ու մնում է քննած: Նշանակած ժամը որ գարկում է՝ սիրտը ճմլում է, մի կերպ աչքը բաց է անում, տեսնում է խոստացած ժամից մի վայրկեան անց է կացել: Ոսկի մատանին ձկութիւն է դնում ու իսկոյն դուրս է գալիս անտառի տիրոջ ապարանքում:

Ոչ ոք չի գալիս դէմը, ոչ ոքի չի հանդիպում:

Լռութիւն ու մեռելութիւն: Ոչ այգիներում թռչուններն են երգում իրենց դրախտական երգերը, ոչ շաղրւաններն են զւարթ վեր ցայտում իրենց ջրերը, ոչ աղբիւրներն են խոխոջում, ոչ էլ երաժշտութիւնն է հնչում մարմար պալատներում: Սիրտը մի վատ բան է գուշակում: Վազէ-վազ պարտում է ամբողջ պալատն ու այգին, կանչում է իր սիրելի ընկերին, ոչ մի կողմից ոչ ձէն է գալիս, ոչ պատասխան: Վազում է դէպի էն թումբը, ուր բուսել ու ծաղկում էր իր Կարմիր ծաղիկը: Ի՞նչ է տեսնում: Անտառի տէրը, անճոռնի հրէշը երկու թաթերով Կարմիր ծաղիկը պինդ գրկած ու ընկած թմբի վրայ:

Ասում է՝ երևի ինձ սպասել է, սպասել ու քունը տարել է, խորը քնել: Սկսում է զգոյշ զարթեցնել, տեսնում է չի լսում, ժաժ չի գալիս: Վերցնում է բրդոտ թաթը, տեսնում է անշունչ, մեռած ընկած է... Աչքերը մթնում են, ծնկները տակին ծալւում են, տեղն ու տեղը չոքում է, երկու ձեռքով անճոռնի հրէշի այլանդակ գլուխը գրկում ու բարձր ձէնով լաց լինում, ճչում:

— Կեր կաց, զարթնիր իմ սրտակից ընկեր, ես սիրում եմ քեզ, իմ սրտով սիրածն ես դու...»:

Էս խօսքերն ասում է թէ չէ, յանկարծ կայծակը ճայթում է, երկիրը շարժւում է հիմքից, հրեղէն լախտը զար-

կում է թմբին ու աղջիկը ուշաթափ ընկնում է, մնում տեղն ու տեղը ընկած:

Շատ է մնում թէ քիչ, էդ էլ չի իմանում, միայն որ աչքը բաց է անում՝ տեսնում է ինքը մի պալատում, անգին քարերով զարդարած ոսկե գահի վրայ նստած է, մի ջահել, գեղեցիկ երիտասարդ էլ ձեռը բռնած կողքին կանգնած: Երիտասարդի գլխին թագաւորական թագ, հագին ոսկեհոռ զգեստ: Առաջին կանգնած են հէրն ու քոյրերը, իսկ չորս կողմը ծոնկի եկած պալատական թիկնապահները, բոլորը հագած ու զուգւած ոսկեզօծ և արծաթազօծ կերպաս զգեստներով:

Ու երիտասարդը դառնում է դէպի իրեն.

— Իմ աննման տիրուհի, ոնց որ իմ բարութեան համար դու սիրեցիր ինձ հրէշի անճոռնի կերպարանքում, այժմ էլ սիրիր մարդկային կերպարանքում, եղբի իմ սրտով սիրած հարսնացուն: Չար կախարդը իմ հանգուցեալ թագաւոր հօր վրայ բարկացած, ինձ գողացել էր մանուկ ժամանակից, դարձրել էր անճոռնի հրէշ ու կապանք էր դրել վրէս, որ էն սոսկալի ու այլանդակ կերպարանքով՝ ամենքին ու ամեն արարածի՝ ատելի մնամ, մինչև որ մի գեղեցիկ աղջիկ գտնւի, որ ինձ սիրի ու ցանկանայ իմ կինը լինել: Էն ժամանակ պէտք է քանդէր կախարդական կապանքը: Երեսուն տարի ես մնացի էսպէս կախարդւած, երեսուն տարւայ մէջ տասնումէկ աղջիկ բերի իմ ամբողջը, իսկ դու եղար տասներկու երորդը: Նրանցից ոչ մինը ինձ չը սիրեց, ոչ իմ փաղաքշանքների, ոչ իմ սիրոյ, ոչ էլ իմ բարութեան համար: Միայն դու եղար, որ իմ սիրոյ դէմ սէր ցոյց տւիր ինձ, դրա համար էլ դու պէտք է լինես իմ պաշտելի թագուհին:

Էստեղ էլ աղջկայ հէրն ու նախանձոտ քոյրերը, պալատականները, ծառաները, ամենքը, ամենքը ամեն կողմից առաջ են գալիս, շնորհաւորում են նորահարսի ու նորափեսի բախտաւորութիւնն ու սկսում է ուրախ հարսանիքի հանդէսը:

ԳԵՂԵՑԿՈՒՅԻ ՎԱՍԻԼԻՍԱՆ

Լինում է չի լինում մի վաճառական. տասներկու տարւայ պսակւած է լինում, ունենում է միայն մի աղջիկ, անունը Գեղեցկուհի Վասիլիսա: Վասիլիսայի ութ տարին լրացած — մէրը մեռնում է: Մեռնելիս աղջկանը կանչում է, ասում է.

— Լսի՛ր, Վասիլիսա, միտդ պահիր ու կատարիր իմ վերջին խօսքը: Ահա ես մեռնում եմ ու իմ մայրական օրհնութեան հետ էս տիկնիկն եմ թողնում քեզ: Միշտ մօտդ ու հետդ կը պահես էս տիկնիկը, ոչ ոքի ցոյց չես տալ, իսկ մի ցաւ կամ վիշտ ունեցած ժամանակդ կերակուր կը տաս իրեն, կը կերակրես ու խորհուրդ կը հարցնես: Կուտի ու քեզ կասի, թէ ինչ ճար ու հնար անես քո ցաւին:

Ասում է, աղջկանը համբուրում ու մեռնում:

Կնոջ մահից յետոյ, ինչպէս սովորութիւն է, վաճառականը սուգ է պահում, յետոյ սկսում է մտածել, որ նորից ամուսնանայ: Ու ամուսնանում է մի այրի կնոջ հետ: Էս այրին էլ ինքը հասակն առած կին է լինում, համարեա թէ Վասիլիսային հասակակից էլ երկու աղջիկ է ունենում:

Վասիլիսան իրենց տեղի առաջին գեղեցկուհին է լինում: Խորթ մէրն ու իր աղջիկները նախանձում են նրա գեղեցկութեան վրայ ու շատ բանի դնելով չարչարում են, որ աշխատանքից նիհարի, արևից ու քամուց սեանայ: Մի խօսքով օր չեն տալի:

Վասիլիսան էս ամենը տանում է անտրտունջ ու, ընդհակառակը, օրն օրի վրայ լցւում, լաւանում է. այն ինչ խորթ մէրն ու իր աղջիկները իրենց ներսի չարութիւնից հալւում

են, մաշուում ու նիհարում, թէև ամբողջ օրը ձեռները ծալած, աղջիկ պարոնների նման տանը նստած են լինում:

Ոչ ոք էլ չի իմանում սրա գաղտնիքը: Ձեն իմանում թէ էս բոլորը Վասիլիսայի մօր թողած տիկնիկն է անում:

Բաժին կը տային, Վասիլիսան ամենալաւ պատառը կը պահէր իր տիկնիկի համար: Իրիկունը, երբ ամենքը կը պառկէին քնելու, նա իր նկուղում կը փակէր ու տիկնիկի հետ կը խօսէր:

— Տիկնիկ ջան, ան, անուշ արա,
իմ սև դարդին ականջ արա:

Հօրս օջախումը ապրում եմ ես
միշտ անխնդում ու լուռ էսպէս:

Իմ խորթ մէրը խաթուն-խանում—
ինձ աշխարհքից դուրս է անում:

Աստ, հոգիս, էս ցաւի դէմ

ես ի՞նչ անեմ, ես ճնց անեմ:

Տիկնիկը կուտէր, խորհուրդներ կը տար, կը մխիթարէր, առաւօտն էլ նրա բան ու գործն էլ ինքը կանէր: Վասիլիսան իրեն համար դինջ ու հանգիստ կը նստէր ծառերի շաքենքում, ծաղիկ կը քաղէր, ու մին էլ էն կը տեսնէր, որ իր մարգերը քաղհանած են, բանջարեղէնը ջրած, ջուրը բերած, կրակն արած:

էսպէս մի քանի տարի անց է կենում: Վասիլիսան մեծանում է, հասնում, դառնում հարսնացու: Ամեն կողմից փեսացուները խնամախօսներ են զրկում նրան ուղեւու. իսկ խորթ մօր աղջիկներին հարցնող չկայ: Չար կիներ աւելի է կատաղում, թէ մեծերից առաջ փոքրին չեմ կարող մարդու տալ: Խնամախօսներին էսպէս ճամփու է դնում ու բռնում Վասիլիսային ծեծում, ջարդում, ջիգրը նրանից է հանում:

Մի անգամ էլ էս վաճառականը առևտրական գործերով ուրիշ աշխարհ է գնում: Խորթ մէրն ուրիշ տուն է փոխում:

Իսկ էս նոր տան կողքին մի մութն անտառ է լինում, էն անտառում էլ բնակւելիս է լինում մի կախարդ պառաւ,

որ ոչ ոքի մօտ չի թողնում, մարդկանց էնպէս է ուտում, ոնց որ հաւի ճուտեր: Խորթ մէրը ամեն մի դատարկ բանի համար շարունակ անտառն է զրկում իր աչքի փուշ Վասիլիսային, թէ ինչ է՝ կախարդի ճանկն ընկնի: Բայց տիկնիկը միշտ Վասիլիսային ճամփայ է սովորեցնում, չի թողնում կախարդի որջին մօտենայ, ու ամեն անգամ էլ Վասիլիսան ողջ առողջ վերադառնում է տուն:

էսպէսով հասնում են աշունքը: Մի աշունքայ իրիկուն մէրը երեք աղջկայ ձեռքն էլ գործ է տալի— էն էլ դաս: Մինը պէտք է ժանեակ գործէր, միւսը գուլպայ անէր, Վասիլիսան էլ պէտք է մանէր: Էս կախարդը տան բոլոր ճրագները հանգցնում է, մենակ մի մոմ է թողնում վառած ու ինքը պառկում է քնի:

Աղջիկները բանում են: Բանելու ժամանակ որ մոմի պատրոյգն էրում է, խորթ մօր աղջիկներից մինը մաղաչն (ուռնիքը) առնում է՝ իբրև թէ մոմի քիթը կտրի, ուղղի: Ուղղելու փոխարէն, իբրև թէ յանկարծ, լոյսը հանգցնում է: Դու մի ասիլ՝ մէրն է սովորեցրել, որ էդպէս անի:

— Հիմի ի՞նչ անենք, ասում են աղջիկները: Լոյս չը կայ, դասներս էլ կիսատ են:

— Ի՞նչ պէտք է անենք, պէտք է մինս ու մինս գնանք կախարդ պառաւից կրակ բերենք:

— Ինձ իմ ձեռի ասեղներն էլ են լոյս տալիս, կրակն ի՞նչ եմ անում. ինչ ուզում է լինի, ես չեմ գնալ, ասում է ժանեակ գործող աղջիկն ու տեղը պինդ նստում:

— Ես էլ չեմ գնալ, էն կողմից վրայ է բերում միւս քոյրը, որ գուլպայ էր գործում, ինձ իմ միլերի լուսն էլ է բաւական:

— Դէ վեր կաց դու գնա, միաձայն կանչում են երկուսն էլ ու դուրս են հրում Վասիլիսային: Գնա կախարդ պառաւից կրակ առ բեր:

Վասիլիսան վեր է կենում գնում իր նկուղը, պահած ընթրիքը դնում է տիկնիկի առաջն ու ասում:

1007
32940

Տիկնիկ ջան, ան, անուշ արա,
իմ սև դարձին ականջ արա:
Ինձ ղըրկում են կրակ բերեմ չար պառաւից,
չար պառաւը կուտի հօ ինձ...

Ասա, հոգիս, էս ցաւի դէմ
ես ի՞նչ անեմ, ես ի՞նչ անեմ:

Տիկնիկը որ ուտում է պրծնում, աչքերը ջուխտ մոմի պէս վառում են, ասում է.

—Մի վախենար, Վասիլիսա. ուր որ ղըրկում են—գնա, միայն թէ ինձ հետդ պահիր: Ես որ հետդ լինեմ, պառաւը քեզ բան չի անի:

Վասիլիսան վեր է կենում, տիկնիկը գրպանն է դնում ու ճամփայ ընկնում դէպի մութն անտառը: Գնում է, բայց ոչ մեռած է, ոչ կենդանի. հետը գնում է, հետը դողում: Մին էլ էն է տեսնում՝ մի սիպտակ ձիաւոր ցոլաց ու անցաւ. ինքը սիպտակ, հագինը սիպտակ, ձիու սարքը սիպտակ, ու սկսեց ծէգել:

Մի քիչ էլ գնում է, տեսնում հիմի էլ մի կարմիր ձիաւոր անցաւ. ինքը կարմիր, հագինը կարմիր, տակինը կարմիր. էս տեղ էլ արեւը բացւեց...

Օր ու գիշեր գնում է Վասիլիսան, մին էլ միւս օրւայ իրիկունը դուրս է գալիս էն բացատը, որտեղ կանգնած է լինում Կախարդ պառաւի խրճիթը: Խրճիթի չորս կողմի ցանկապատը մարդկային ոսկորներից և էստեղ էնտեղ վրէն ցից հանած մարդկային գանգեր: Դարպասի սիւների փոխարէն մարդկային ոտներ, փակիչի տեղը ձեռներ, կողպէքի տեղակ —ատամները վրէն ծնօտներ:

Սարսափից մարում է Վասիլիսան ու տեղն ու տեղը քարանում մնում: Եւ ահա դարձեալ մի ձիաւոր, ինքը սև, հագինը սև, տակինը սև. քշած գալիս է ու Կախարդի դռանը չքում, տեղն ու տեղը անհետանում: Ու վրայ է հասնում գիշերը: Բայց ցանկապատի վրայ ցից հանած գանգերի աչքերը լուս են տալի մթնում ու բացատն էնպէս է լուսաւորում,

ոնց որ թէ ցերեկ լինէր: Վասիլիսան ահից ու սարսափից դողում է, բայց չի իմանում որ կողմը փախչի, մնում է մեխւած:

Յանկարծ անտառից մի զարհուրելի աղմուկ է տարածւում. ծառերը ճրճում են, խաշամը խշխշում է. դու մի ասիլ Կախարդ պառաւն է, անտառից դուրս է գալիս:

Գալիս է սանդի մէջ մտած, թափով թափելով, ջարդելով ու հալածելով, աւելով հետքը սրբելով: Գալիս է դռանը կանգնում, չորս կողմի վրայ հոտհոտում ու իրեն իրեն վրձնում. —Թո՛ւհ, թո՛ւհ, թո՛ւհ, մարդմարդահոտ է գալիս... Ո՛վ կայ էստեղ...

Վասիլիսան էն կողմից ահ ու դողով մօտենում է, խորը գլուխ է տալիս ու ասում.

—Ես եմ, նանի ջան, իմ խորթ մօր աղջիկներն ինձ ղըրկել են քեզ մօտ կրակի:

—Լաւ, լաւ, ասում է Կախարդը, ճանաչում եմ ինչ պրտուղներ են: Դէ ինձ մօտ կացի ու աշխատի: Որ ինձ մօտ կենաս ու աշխատես, կրակ կը տամ տանես նրանց համար, թէ չէ—քեզ էլ կուտեմ:

Ետոյ դռնում է իր դարպասին ու ճչում.

—Հէյ բացւեցէք, ամուր փակեր, ետ գնացէք, լէն դարպասներ...

Դռները իսկոյն բացւում են: Կախարդը սուլելով ներս է մտնում, Վասիլիսան էլ ետևից, ու բոլորը նորից փակւում են:

Ներս են մտնում թէ չէ, Կախարդ պառաւը իր տախտի վրայ ձգւում է ու Վասիլիսային ասում.

—Հապա մի էստեղ բեր կրակի կողքին ինչ որ կայ, սոված եմ, ուզում եմ հաց ուտեմ:

Վասիլիսան ցանկապատի գանգերից մարխը վառում է ու իրար ետևից բերում ուտելիքները պառաւի առաջը շարում: Ուտելիքն էնքան է լինում, որ տասը հոգի ուտէին—հերիք կանէր: Ներքնատնից էլ գինի, արաղ է բերում, ու պառաւը նստում է ընթրիքի: Բոլորն ուտում է, խմում,

Վասիլիսային թերմացքից մի քիչ բան է թողնում ու վաճառում պառկում է քնի: Քնելուց առաջ գլուխը վեր է քաշում, Վասիլիսային ասում:

— Լաւ մտիկ արա հա՛, առաւօտը որ ես կերթամ— դուռը կը սրբես, խրճիթը կաւկես, ճաշը կեփես, լացքը կանես, յետոյ կերթաս հորից մի թաղար ցորեն կը հանես, կընտրես, սե տրիճը կը ջոկես: Միայն թէ տես, ամեն բան արած լինի էնպէս, ինչպէս ասում եմ, թէ չէ— քեզ կուտեմ:

Պատահում է ու գնում: Վասիլիսային պառաւի թերմացքը տանում դնում է իր տիկնիկի առջև, հետն արտասուք է թափում, հետն ասում:

Կեր, տիկնիկ ջան, անուշ արա,

իմ սե դարդին ականջ արա:

Չար պառաւը իմ ուժից վեր

տւել է ինձ ծանրը գործեր:

անեմ— էնքան ես ուժ չունեմ,

չանեմ— կուտի, ես ի՞նչ անեմ...

Տիկնիկը պատասխանում է.

— Մի վախենար, սիրուն Վասիլիսա: Հաց կեր, աղօթի՛ր ու քնի: Լուսը կը գայ բարին հետը:

Առաւօտը ծէգին զարթնում է Վասիլիսային, տեսնում է պառաւն արդէն վեր է կացել, լուսամուտից դուրս է նայում ու գանգերի աչքերը հետզհետէ մարում են: Ահա ցոլաց և սիպտակ ձիաւորն ու լուսը բացւեց: Պառաւը դուրս ելաւ, սուլեց. յայտնւեցին սանդը, թաւն ու ոտնաւելը, ցոլաց կարմիր ձիաւորը— արեւը ծագեց: Ու պառաւը մտաւ սանդի մէջ, թռաւ գնաց, թափով թափելով, ջարդելով, փշրելով ու քշելով, ոտնաւելով հետքը սրբելով ու աւելելով:

Վասիլիսային էլ ետ մնում է մենակ: Ման է գալիս պառաւի տունը, աչք է ածում ամեն անկիւն ու մնում է դարմացած ամեն բանի լիութեան վրայ: Ապա սկսում է միտք անել, թէ ինչպէս անի, որ պառաւի պատէրը կատարի: Մին

էլ տեսնում է ամեն բան կատարած, պատրաստ, ու տիկնիկը ցորնի վերջին տերեփուկներն է ջոկում:

— Քեզ միայն էն է մնում, որ կերակուրն եփես, Վասիլիսա, ասում է տիկնիկը ու մտնում գրպանը:

Իրիկնագէտին Վասիլիսային սեղանը բաց է անում ու սպասում է պառաւին: Սկսում է մթնաժողով: Դարպասի առջև սեին է տալի սե ձիաւորն ու ակնակիր մուծը կոխում է գետինը: Միայն գանգերի աչքերն են, որ վառում են խաւարում:

Ապա անտառն սկսում է ճրճաւ ու խաշամը խշխշաւ. պառաւը գալիս է: Վասիլիսային դուրս է գալի դէմը:

— Հը՛, ամեն բան պատրաստ է թէ չէ:

— Պատրաստ է, նանի ջան, արի՛ քո աչքովը տես, պատասխանում է Վասիլիսային:

Պառաւը ներս է մտնում տեսնում ամեն բան պատրաստ ու կատարում է, որ բարկանալու բան չը կայ: Ասում է.

— Դէ՛ լաւ, ու ճշում է. իմ ընկերներ, իմ աջ ձեռներ, եկէ՛ք, տարէ՛ք իմ աղունն աղացէ՛ք:

Էս ձէնի վրայ երեք շուխտ ձեռքեր են յայտնւում, ցորենն առնում տանում:

Պառաւն ուտում է կշտանում, սկսում է պառկել ու Վասիլիսային նոր հրամաններ է տալիս. ասում է.

— Է՛գուց էլ էն կանես, ինչ որ էսօր արել էիր, ու բացի դրան՝ հորիցը մի թաղար խաշխաշի սերմը կը հանես ու հողը կը ջոկես հատիկ հատիկ: Չեմ իմանում թէ ով է հողն ու խաշխաշն իրար խառնել:

Ասում է, երեսը պատին անում ու խոմփացնում:

Վասիլիսային գնում է դարձեալ տիկնիկին ուտեցնում ու հարցնում:

— Աղօթի՛ր ու քնի, Վասիլիսա, պատասխանում է տիկնիկը. լուսը կը գայ՝ բարին հետը: Ամեն բան պատրաստ կը լինի վաղը:

Առաւօտը էլ ետ իր սանդն է մտնում պառաւն ու գնում, իսկ Վասիլիսային իր տիկնիկի հետ ամեն բան անում են վեր-

Չացնում: Պառաւն իրիկունը վերադառնում է, մտիկ է տալիս ու կանչում:

— Իմ անձններ, իմ ընկերներ, եկէք, տարէք խաշխաշից իւղ հանեցէք ինձ համար:

Իսկոյն յայտնւում են երեք ջուխտ ձեռներ, խաշխաշն առնում են տանում:

Ապա պառաւը ընթրիքի է նստում, իսկ Վասիլիսան լուռ կանգնած է առաջին:

— Ինչո՞ւ չես խօսում, հարցնում է կախարդը, էնպէս լուռ ու մունջ կանգնել ես, կարծես թէ բերանումդ լեզու չը կայ:

— Ձեմ համարձակւում խօսեմ, նանի ջան, պատասխանում է Վասիլիսան. իսկ եթէ դու հրաման ես տալի խօսելու, մի բան կը հարցնեմ:

— Հարցրո՞ւ, միայն թէ իմացած եղիր— լաւ չի, որ ամեն բան իմանաս. շատ իմանաս— շուտ կը պառաւես:

— Ես էն էի ուզում քեզ հարցնեմ, նանի ջան, ինչ որ աչքով տեսել եմ: Էստեղ գալիս ճամփին մի ձիաւոր ընկաւ աչքովս— ինքը սիպտակ, հագինը սիպտակ, տակինը սիպտակ. էն ո՞վ է էն ձիաւորը, նանի ջան:

— Էն իմ պայծառ օրն է, պատասխանում է կախարդը:

— Յետոյ տեսայ մի ուրիշ ձիաւոր— ինքը կարմիր, հագինը կարմիր, տակինը կարմիր. է՞ն ո՞վ է:

— Էն էլ իմ կարմիր արեւն է:

— Իսկ էն սև սև ձիաւորն ո՞վ է, որ քո դարպասի դռանը վրա հասաւ. ինքը սև, հագինը սև, տակինը սև:

— Էն էլ իմ մութը գիշերն է: Երեքն էլ իմ հաւատարիմ ծառաներն են:

Վասիլիսան էստեղ յիշում է երեք ջուխտ ձեռներն ու լռում:

— Էլ ինչո՞ւ չես բան հարցնում:

— Էս էլ հերիք էր, նանի ջան: Ձէ՞ դու ինքդ ասիր՝ թէ որ շատ իմանամ, շուտ կը պառաւես:

— Լաւ ես անում, որ էն ես հարցնում՝ ինչ որ դուրսն

ես տեսել, էն չես հարցնում, ինչ որ ներսն ես տեսել: Ես չեմ սիրում որ իմ տան աղբն ու կեղտը դուրս են հանում, ու շատ հետաքրքիրներին ուտում եմ: Դէ կաց, հիմի էլ ես քեզ հարցմունք անեմ: Դու էդ ինչպէս ես կարողանում անել ու հասցնել էսքան գործը, որ ես քեզ յանձնարարում եմ:

— Իմ մօր օրհնանքն ինձ օգնում է, նանի ջան, պատասխանում է Վասիլիսան:

— Ո՞նց թէ... դու օրհնած ես, հա... Դէ էստեղից դուրս գնա կորի դու, օրհնած աղջիկ: Օրհնածներն ինձ պէտք չեն էստեղ:

Ասում է ու խրճից դուրս քաշում, դարպասից դուրս հրում, ցանկապատի վրայ վառող աչքերով գանգերից մինն էլ մի ձողի ծէր է անց կացնում ձեռը տալի, թէ՛

— Էս էլ քեզ կրակ՝ քո խորթ մօր ու իր աղջիկների համար: Ձէ՞ որ նրանք քեզ կրակի են ղրկել ինձ մօտ, որ իրենց համար կրակ տանես:

Ու վազում է Վասիլիսան, վազում է դէպի տուն: Ձեռքի գանգը ճամփին լուս է տալի մինչև ծէգը ու ծէգին հանգչում: Միւս օրն իրիկունը վերջապէս տուն է հասնում: Որ հասնում է, ուզում է ձեռքի գանգը դէն գցի. մտքումն ասում է՝ մինչև հիմի երևի արդէն կրակ կը լինեն արած: Էս մտքի մէջ մին էլ յանկարծ գանգից մի խուլ ձէն է գալի. «Ինձ գէն մի գցիլ, տար քո խորթ մօր մօտ»...

Տանն էլ մտիկ է տալիս, տեսնում է մութը, կրակ չի երևում, գանգը հետը ներս է տանում:

Խորթ մէրն ու իր աղջիկները Վասիլիսին որ տեսնում են՝ սկզբումը ուրախ հանգիպում են, պատմում են, թէ էն օրւանից ինչ դու գնացել ես՝ մեր տանը դեռ կրակ չի վառւել, Մենք չենք կարողացել կրակ անենք, հարևաններից էլ ինչքան բերել ենք, տուն ենք հասցրել թէ չէ՝ հանգել է:

— Հիմի քո կրակը վառ կը մնայ, ասում է խորթ մէրը:

Գանգը ներս են տանում թէ չէ՝ աչքերն էնպէս են նայում խորթ մօրն ու իր աղջիկներին, որ էրում են, կրակում:

Ուզում են թաքչեն, բայց ուր որ թաքչում են, աչքերը ամեն տեղ հետևում ու նայում են նրանց, էրում, կրակում են նրանց:

Ու լուսադէմին խորթ մէրն ու իր աղջիկներն արդէն էրել, ածուխ էին կտրել. միայն Վասիլիսային էր, որ ոչինչ չէր եղել:

Առաւօտը Վասիլիսան գանգը հողումը թաղում է, տան դուռն ամուր կողպում, ինքը գնում է քաղաք, մի անորդի պառաւի խնդրում է, որ մօտը կենայ, մինչև իրեն հէրը օտարութիւնից գայ: Պառաւը սիրով ընդունում է իր աղջկայ նման, Վասիլիսան էլ նրան սիրում, պատում է իր մօր պէս, մօտը ապրում է ու սպասում: Պարապութիւնից որ յոգնում է, մի օր էլ պառաւին ասում է.

— Էսպէս պարապ-սարապ նստելուց յոգնում եմ, նանի ջան, ինչ կը լինի գնաս վուշ առնես բերես մանած անեմ: Պառաւը գնում է, վուշ է առնում բերում: Վասիլիսան նըստում է մանած անում, էնքան բարակ ու նուրբ, ոնց որ մագ: Մանածն անում է պրծնում, հիմի պէտք է գործի: Բայց էն տեսակ տորք չի գտնում, որ էն մանածին գայ, ոչով էլ չի կարողանում շինի: Վասիլիսան էլ ետ իր տիկնիկին է խնդրում:

Տիկնիկն ասում է.

— Գնա ինձ համար մի հին տորք բեր ու մի մաքուր, մին էլ մի քիչ ձիու ձար, ես քեզ համար ամեն բան շինեմ:

Վասիլիսան գնում է գտնում, ինչ որ հարկաւոր է, տալիս է տիկնիկին, ինքը քնում: Առաւօտը վեր է կենում տեսնում տիկնիկը մի հիանալի տորք է շինել:

Վասիլիսան կտաւը հինում է, նստում գործում ու ձմեռւայ վերջը արդէն պատրաստ է լինում: Մի կտաւ, որ ասեղի ծակովն անց կը կենար: Գարունը կտաւը ձերմակացում են ու Վասիլիսան պառաւին ասում է.

— Նանի ջան, տար էս կտաւը ծախի, փողը բեր— քեզ լինի:

Պառաւը կտաւին մտիկ է անում՝ մնում բերանը բաց: Ասում է.

— Աղջիկ ջան, էս կտաւը թագաւորին վայել կտաւ է: Արի տանեմ պալատը՝ տեսնեմ:

Էս կտաւն առնում է պառաւը, գնում թագաւորի պալատի մօտերը պտրտում: Թագաւորը նկատում է, որ մի պառաւ իր պալատի մօտերը պտրտում է, ասում է.

— Ի՞նչ ես ուզում, այ նանի:

Պառաւը թէ՛

— Թագաւորն ապրած կենայ, ես քեզ վայել մի էն տեսակ ապրանք եմ բերել, որ ուզում եմ դու տեսնես:

Թագաւորը հրամայում է պառաւին ներս բերեն: Պառաւին որ ներս են բերում, թագաւորը կրտաւը տեսնում է՝ էստեղ էլ սրա բերանն է մնում բաց: Ասում է.

— Ի՞նչ է սրա գինը, այ նանի:

Թէ. — սրան գին չունի, թագաւորն ապրած կենայ, քեզ նէր եմ բերել:

Թագաւորը շնորհակալութիւն է անում, ինքն էլ իր կողմից պառաւին է նւէրներ տալիս ու արձակում:

Ուզում են էս կտաւիցը թագաւորի համար շապիկ կարեն. բերում են ձևում, բայց էնպէս կարող չեն գտնում, որ կարի: Ման են գալիս ման. վերջը թագաւորն էլ ետ էն պառաւին է կանչում, թէ՛

— Այ նանի, ոնց որ էս կտաւը գործել ես, էնպէս էլ պէտք է կարես, թէ չէ ուրիշ կարող չըկայ:

Պառաւն ասում է.

— Թագաւորն ապրած կենայ, ոչ ես եմ մանել ու գործել էս կտաւը, ոչ էլ ես կարող եմ կարել: Մի որդեգրուհի ունեմ տանը, էս նրա ձեռքի գործն է:

— Լաւ, որդեգրուհիդ լինի: Տար տուր նրան, թող նա կարի:

Պառաւը վերադառնում է տուն, Վասիլիսային պատմում ինչ որ պատահել էր:

—Ես էլ գիտէի, որ էս գործը վերջը ինձ էր հասնելու, ասում է Վասիլիսան: Փակում է իր սենեակում ու սկսում է կարել: Գիշեր ցերեկ է անում, կարում, պատրաստում, տալիս է պառակին թէ դէ տար տուր թագաւորին:

Պառաւը շապիկն առնում է տանում պալատը, տալիս թագաւորին, իսկ Վասիլիսան երեսը լւանում է, գլուխը սանրում, հագնւում, գոգւում, նստում լուսամուտի առաջն ու սպասում: Սպասում է թէ տեսնի ինչ պէտք է լինի:

Մին էլ էն է տեսնում, որ թագաւորի մարդիկը գալիս են պառակի տունը: Գալիս են, ներս են մտնում ու յայտնում, թէ ով է կարել թագաւորի շապիկը, թագաւորն ուզում է նրան տեսնի ու ինքը իր ձեռքով վարձատրի:

Վասիլիսան վեր է կենում, գնում թագաւորի առաջին կանգնում: Թագաւորի տեսնելն ու սիրահարւելը մին է լինում:

—Էլ ես քեզանից ձեռը քաշողը չեմ, սիրուն Վասիլիսա, ասում թագաւորը: Էսօրւանից դու իմն ես, ես քոնը, էս օրւանից իմ կեանքի ընկերն ու իմ աշխարհքի թագուհին ես դու...»

Ասում է, ձեռիցը բռնում, բարձրացնում, նստեցնում իր կողքին ու սկսում է հարսանիքը: Վասիլիսայի հէրն էլ վրա է հասնում, աղջկայ բաղդաւորութիւնը որ տեսնում է՝ ուրախանում, աշխարհքովը մին է լինում, ու էն ֆնախ է, որ ֆնում է աղջկայ մօտ: Իր մէրացու պառակն էլ չի մոռանում Վասիլիսան. բերում է պալատ, պահում է իրեն մօտ, իսկ տիկնիկից չի բաժանւում մինչև մահը միշտ, ամեն տեղ պահում է գրպանում:



Ընկերութեան հրատարակութիւնները.

1. Լ. Ուօլլէս. Բէն-Հուր. հ. 1. Թարգմ. անգլ. Փ. Վարդանեան.	— 75
2. Նոյն, հ. II.	— 75
3. Շիրմանդաղէ, Արախաւ	— 25
4. Մուրացան. Գէորգ Մարդապետունի, պատմական վէպ	1— 20
5. Ժուկովսկի. Բնած արքայադուստրը, պատկ. հէք. փոխ. Աթ. Խնկոյեան	15
6. Ստ. Տէր-Աւետիքեան. Պատմածքներ	— 50
7. Նար-Իոս. Մահը, վէպ	1— 20
8. Ն. Բուբակին. Ստորերկրեայ կրակ. պատ.	— 50
9. Զ. Դիկկենտ. Դաւիթ Կօպլէրֆելդ. պատկ. վէպ, մասն առաջին, անգլ. Թարգմ. Փ. Վարդանեան	— 75
10. Նոյն, մասն երկրորդ	— 75
11. Նոյն, մասն երրորդ	— 75
12. Շիրմանդաղէ. երկերի ժողովածու, հատ. IV	1— 50
13. Դ. Դեմիրճեան. Բանաստեղծութիւններ.	— 50
14. Ոսկէ Աղջիկը, Թարգմ. Լ. Մելիք-Աղամեան	— 7
15. Ակ-Բօզատ, Թարգմ. Ս. Թորոսեան	— 15
16. Ստեփաննոս Նազարեանի երկերը, հատոր I	1— 50
17. Սպիտակ տառնդնիկը, փոխ օր. Ն. Գրիգորեան	— 20
18. Ստ. Տէր-Աւետիքեան. Բուստը	— 5
19. Անուշ. Տէր-Ղեոնդեան, Ուսնի	— 40
20. Նոյն, Մաղկոց մտայ	— 30
21. Գրիմմ եղբայրներ չէքիսթները, պրակ I	— 25
22. Նոյն, Նոյն, II	— 25
23. Նոյն, Նոյն, III	— 25
25. Աւետիս Անարճեան, Փոքրիկ պատմածքներ	— 25
26. Ռուսական չէքիսթներ, Թարգմ. Յովհ. Թումանեան	— 25

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

1. Դարբիէլ Դ'Անունցիօ. Ջիօհօնդա. ողբ. 5 ար. Ֆր. Թրգմ. Ս. Յակոբեան:	
2. Իլ. Ճաւաւաձէ. Մուրացեանի պատմածը. վր. Թրգմ. Տ. Փիլոսոփեան:	
3. Ա. Անարճեան. Աստու կրակը:	
4.—5. Իւշկիւիշ. Թագաւոր. ողբ. Թարգմ. Յ. Յովհաննիսեան:	
6. Յ. Մալխասեան. Յանցանքը:	
7. Մէլքի. Ծիլ ու ծաղիկ:	
8.—9. Կոմս Ա. Կ. Տօյստոյ. Իօանն Ահիլի մահը. ողբ. 5 ար., ողբ. Թարգմ. Տ. Յովհաննիսեան:	
10. Անտօն Չեխով. Պատմածքներ. ողբ. Թարգմ. Ռ. Խան-Աղատ:	
11.—12. Ա. Ս. Գրիբանդով, Խելքից պատուհաս. կոմ. չորս դործ. ուսանաւորով. Թարգմ. Լ. Մանուկեան:	
13. Լորդ Բայրօն. Մանֆրէդ. անգլ. բնագրից Թարգմ. Տիւրայր վարդ.	
14. Գիլքը-Մոպսսան. I ճարպագունդը, II Ջարգը. Ֆրանս. Թարգմ. Ռ. Խան-Աղատ:	
15. Վալազեան. Բժիշկը. դրամա 3 դործ.:	
16.—17. Կնուտ Համսուն. Պան. Լէյտընանտ Թոմաս Գլանի Թղթերից. գերմ. Թարգմ. Ա. Իսահակեան:	
18. Մարգար. Վէպիկներ:	
19. Թերուս Կնոշ Խոստովանքը, տ. Ն. Աթայեան:	
20. Ֆեօդօր Իօանովիչ արքան, ողբ. 5 ար., Թարգմ. Տ. Յովհաննիսեան:	
21, 22, 23. Հերման Զուգերման, Հագսը, գերմ. Թարգմ. Դ. Ալթունեան:	

ԻԻՐԱՅԱՆՁԻԻՐ ՀԱՄԱՐԸ 15 Կ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1. Զարաբաստիկ Թուղթը, Ստ. Տէր-Աւետիքեան	— 8
2. Նահապետական տուն, Մովսէս Ղուկասեանց	— 5
3. Գործակատար Մարտիրոսը, Ս. Մ. Շահնազարեան	— 7

ՀՀ Ազգային գրադարան



NL0386941

5009

